ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ավտոմեքենաների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման, գնահատման և ամփոփման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 24.12.2025թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Է. Ջաղացպանյանը

Անդամներ՝ Կ. Հովհաննիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Նիկոլյանը
Բացակայում է Դ. Հակոբյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների համար էլեկտրոնային աճուրդով ս.թ. դեկտեմբերի 12-ին էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am կայքի միջոցով /Համակարգ/ հայտարարվել է ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/40 ծածկագրով ավտոմեքենաների ձեռքբերման ընթացակարգ /Ընթացակարգ/:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել ս.թ. դեկտեմբերի 23-ը ժամը 10:00-ը:
Հակադարձ աճուրդը կայացել է 24.12.2025-ին ժամը 10:00-10:30 ընկած ժամանակահատվածում:

Հ/հ	Չափաբաժնի համար	Չափաբաժնի անվանում	Աճուրդի մեկնարկային գին Առանց ԱԱՀ, ՀՀ դրամ	Մեկնարկ
1	1	Ավտոմեքենաների ձեռքբերում	36 250 000	2025-03-31 10:00:00

2. <u>Հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.</u>

2.1 Հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

Զբաղեց-րած տեղը	Հ/հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն, էլ. փոստի հասցեն	Հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	1	Կապիտալ Մոթորս ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 30/1 info@kia.am	+374 99109103	00059627

<u>3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>

3.1. Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» /Կարգ/ 32-րդ կետի 21-րդ ենթակետի՝ մասնակիցների հայտերը ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից և իրականացված գնահատման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

Կապիտալ Մոթորս ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որտեղ հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրմամբ;
2. Դիմում հայտարարության /Հավելված 1/ -ի 2-րդ ենթակետի 3-րդ կետով սահմանված աղյուսակի տվյալները լրացված են ոչ ամբողջական, մասնավորապես. Նշված չէ հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տեսակը /Ն/ք կամ անձնագիր/:
3. Հավելված 1.3-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացված է 2023թ. համար, անհրաժեշտ է այն փոխարինել 2025թ. տեղեկատվությամբ՝ հետևյալ հղմամբ.

4. https://www.e-register.am/am/companies/1557804/declaration/e91a0d44-01eb-4ac7-8cb4-393b03d4c9d4

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» /Կարգ/ 41-րդ կետով՝ նիստը կասեցնել 1 /մեկ/ աշխատանքային օրով և մասնակցի առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 25.12.2025թ. ներառյալ շտկել նշված անհամապատասխանությունները /հիմքը՝ Armeps համակարգով ոչ ավտոմատ ծանուցում/:

4.Մասնակիցների գնառաջարկները՝ ըստ Համակարգի

ՀՀ դրամ

Չափա բաժնի համար	Զբաղեց ված տեղ	Ներկայացված հայտեր	Նախա-հաշվա-յին գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Կապիտալ Մոթորս ՍՊԸ	43500000	36250000	20 %	43500000	35000000	20 %	42000000

5. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

5.1 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, ինչպես նաև ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Կապիտալ Մոթորս ՍՊԸ կողմից ներկայացված հայտը, ինչպես նաև ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատել բավարար և ճանաչել որպես ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

5.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ անգործության ժամկետ չսահմանել և ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Ջաղացպանյան

անդամներ՝ _____ Կ. Հովհաննիսյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան